ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 700-Ա/2 **«16» մայիսի, 2023 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2023» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«16» մայիսի, 2023 թ.
N 700-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» **ՄՐՑՈՒՅԹԸ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կ**ոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման** առցանց **համակարգով (**https://grants.scs.am)՝ մինչև 2023 թվականի **օգոստոսի 8-ը** ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից (հեռախոս՝ +37410 210 140 (*113; *116), էլեկտրոնային փոստ՝ support@scs.am):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«16» մայիսի, 2023 թ.
N 700-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2023» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մայիսի 16-ի N 700-Ա/2 հրամանի:

1.2 Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով»:

1.3 Մրցույթին մասնակցող ասպիրանտը կարող է դիմել գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով, իսկ հայցորդը՝ «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ» և «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1):

1.4 Մրցույթն անցկացվում է երեք ենթածրագրերով.

- առաջին՝ Թեմայի տևողությունը 36 ամիս (երեք հաջորդական փուլեր, յուրաքանչյուրը՝ 12 ամիս),
- երկրորդ՝ Թեմայի տևողությունը 24 ամիս (երկու հաջորդական փուլեր, յուրաքանչյուրը՝ 12 ամիս),
- երրորդ՝ Թեմայի տևողությունը 12 ամիս:

1.5 Առաջին ենթածրագրին կարող է դիմել.

- առկա ուսուցման առաջին կուրսի (2023 թվականին ասպիրանտուրա ընդունված) ասպիրանտը,
- հեռակա ուսուցման երկրորդ կուրսի (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ) ասպիրանտը,
- երկրորդ տարվա (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ) հայցորդը:

1.6 Երկրորդ ենթածրագրին կարող է դիմել.

- առկա ուսուցման երկրորդ կուրսի (2022 թվականին ասպիրանտուրա ընդունված) ասպիրանտը,
- հեռակա ուսուցման երրորդ կուրսի (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ) ասպիրանտը,
- երրորդ տարվա (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ) հայցորդը,

որոնք պետք է ներկայացնեն.

- ✓ անգլերենի իմացությունը հաստատող, անկախ վավերականության ժամկետից, պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS»(9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր:

1.7 Երրորդ ենթածրագրին կարող է դիմել.

- առկա ուսուցման երրորդ կուրսի (2021 թվականին ասպիրանտուրա ընդունված) ասպիրանտը,
- հեռակա ուսուցման չորրորդ կուրսի (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ) ասպիրանտը,
- չորրորդ տարվա (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ) հայցորդը,

որոնք պետք է ներկայացնեն.

- ✓ անգլերենի իմացությունը հաստատող, անկախ վավերականության ժամկետից, պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS»(9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր,
- ✓ Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-5» բնագավառների մասնագիտություններով.
    - երկու գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)»), **կամ** գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների հրապարակած գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, **կամ** «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում (այսուհետ՝ ՄԳՇ),
    - **կամ** մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում (այսուհետ՝ Մենագրություն):

Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «6» բնագավառի մասնագիտություններով՝

- երկու հրապարակում ՄԳՇ-ում,
- **կամ** մեկ Մենագրություն:

1.8 Առաջին և երկրորդ ենթածրագրերի յուրաքանչյուր փուլի հետագա 12-ամսյա ֆինանսավորման համար պարտադիր է սույն հրավերի՝ համապատասխանաբար **1.6** և **1.7** ենթակետերով պահանջվող, նվազագույն պայմանները բավարարող փաստաթղթերի առկայությունը:

1.9 Հրավերի փաթեթը սահմանում է Մրցույթին դիմելու կարգը, չափանիշները, Հայտերի գնահատման փուլերը, շահառու նախագծերի ֆինանսավորումն ու դրանց իրականացման մասին հաշվետվություն ներկայացնելը:

2. Մրցույթի նպատակը

2.1 Մրցույթի նպատակներն են.

- ներգրավել երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների,
- բարձրացնել գիտության ոլորտում աշխատողների մասնագիտական որակավորումը,
- նպաստել երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը միջազգային հետազոտական միջավայրին:

3. Մրցույթի մասնակիցը

3.1 Մրցույթի մասնակից (այսուհետ՝ Հայտատու) կարող է լինել 1988 թվականի հունվարի 1-ից հետո ծնված՝

- առկա ուսուցման ասպիրանտը,
- հեռակա ուսուցման երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ կուրսի ասպիրանտը,
- երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ տարվա հայցորդը, ով գիտական կազմակերպությունում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ Կազմակերպություն) ձևակերպված է որպես հայցորդ Հայտ ներկայացնելուց առնվազն մեկ տարի առաջ:

3.2 Սույն հրավերի **3.1** կետում նշված տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- Հայաստանի Հանրապետության և (կամ) Արցախի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար 1 տարով:

3.3 Հայտատուն Մրցույթին մասնակցում է իր գիտական ղեկավարի հետ համատեղ:

3.4 Հայտատուի գիտական ղեկավարը կարող է ներգրավվել ոչ ավելի, քան՝ երեք Հայտերում: Յուրաքանչյուր Հայտի հաշվարկով, վերջին 5 տարվա կտրվածքով, Հայտատուի գիտական ղեկավարը պետք է ներկայացնի առնվազն մեկ հրապարակում ՄԳՇ-ում:

3.5 Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացնելու դեպքում Հայտը գիտական փորձաքննության ենթարկելու

հարցը կքննարկվի Հայտերի գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդում (այսուհետ՝ Խորհուրդ):

3.6 Հայտատուն և նրա գիտական ղեկավարը Թեմայի իրականացման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ և բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

4. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

4.1 Կազմակերպությունը հանդիսանալու է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին կնքվող եռակողմ պայմանագրի կողմ:

4.2 Առկա նյութատեխնիկական միջոցների հաշվին Կազմակերպությունն ապահովելու է Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

4.3 Թեմայի կատարողի և վերջինիս գիտական ղեկավարի աշխատանքի ամսական վարձատրությունն ապահովելու համար Կազմակերպությունը կնքելու է պայմանագրեր՝ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով:

4.4 Թեմայի իրականացման համար հատկացված միջոցների սահմաններում Կազմակերպությունը կատարելու է ֆինանսական գործարքներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Գնված սարքերը և նյութերը ներառվելու են Կազմակերպության հաշվեկշռում՝ հետագայում կանոնադրական (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) նպատակներով օգտագործելու համար:

4.6 Կազմակերպությունն ապահովելու է Կոմիտեից ստացված ֆինանսական, կազմակերպչական և Թեմային առնչվող այլ հարցերին վերաբերող որոշումների, հրամանների, հրահանգների իրազեկումը Թեմայի կատարողին:

4.7 Թեմայի իրականացման ժամկետն ավարտվելու օրվա դրությամբ չօգտագործված ֆինանսական միջոցները Կազմակերպությունը վերադարձնելու է Կոմիտեի համապատասխան հաշվին:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Հայտ ներկայացնելը

5.1 Հայտը լրացնում և ներկայացնում է Հայտատուն՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի *(այսուհետ՝ Համակարգ)* միջոցով (grants.scs.am), մինչև 2023 թվականի **օգոստոսի 8-ը** ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

5.2 Մինչև 2023 թվականի **օգոստոսի 15-ը**, առձեռն (ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների փողոց 22), Կոմիտե են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- Հայտատուի դիմումը (Հավելված N 2.2),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը,

- Հայտատուի անձնագրի և սոցիալական քարտի/հանրային ծառայությունների համարանիշի կամ նույնականացման քարտի պատճենը,

- տեղեկանք Կազմակերպության ասպիրանտ հանդիսանալու մասին, որտեղ նշված է ուսուցման ձևը (առկա կամ հեռակա), ուսուցման տարին,

- տեղեկանք Կազմակերպությունում հայցորդ ձևակերպված լինելու մասին, որտեղ նշված է ձևակերպման տարեթիվը,

- օտար լեզվի իմացությունը հաստատող պաշտոնական հավաստագիրը (երկրորդ կամ երրորդ ենթածրագրին դիմելու դեպքում),

- տարիքային շեմը բարձրացնելու համար՝ զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը:

Ուշադրություն. Կոմիտեն ընդունում է միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած հայտերը: Այն հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված կարգով և ժամկետներում, փորձաքննության ենթակա չեն:

6. Ծախսերի նախահաշիվը

6.1 Թեմայի 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը 3,200.0 հազար (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ է:

6.2 Ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ) կազմվում է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներով:

6.3 Նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս Հայտատուի աշխատանքի ամսական վարձատրության չափը նախատեսել մինչև 150.0 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները, իսկ Հայտատուի գիտական ղեկավարի համար 12 ամսվա կտրվածքով նախատեսել մինչև 600.0 հազար ՀՀ դրամի չափով վարձատրություն՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները: Աշխատանքի վարձատրության գումարները վերոնշյալներից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

6.4 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի կամ ծառայությունների ծախսեր, ինչպես նաև Թեմայի իրականացման ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով տեղական կամ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար գործուղումների ծախսեր:

6.5 Գործուղումների օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի:

6.6 Նախահաշվի բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

III. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7 Հայտերի տեխնիկական ստուգումը

7.1 Կոմիտեում ուսումնասիրվում է Մրցույթին ներկայացված Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին: Ամփոփված տեղեկատվությունը տրամադրվում է Խորհրդի քննարկմանը:

7.2 Խորհուրդը հաստատում է գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

7.3 Հայտը չի դիտարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ գիտական թեմայի հետ,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթներին:

8 Փորձաքննությունը

8.1 Կոմիտեն Խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Հայտի գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

8.2 Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են՝

- Թեմայի (Հավելված N 2.3) գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները,
- աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և Նախահաշվի հիմնավորվածությունը,
- գիտության տվյալ բնագավառի (մասնագիտության) առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

8.3 Մասնագիտական կարծիք ստանալու համար Խորհուրդը կարող է ներգրավել տվյալ մասնագիտության անկախ փորձագետ:

8.4 Խորհուրդը Հայտատուներին կարող է հրավիրել հարցազրույցի:

8.5 Յուրաքանչյուր Հայտի համար Խորհուրդը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկ:

8.6 Կոմիտեի և Խորհրդի կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների:

9. Գնահատման արդյունքները

9.1 Գիտական փորձաքննության ավարտից հետո, Հայտերի գիտական փորձաքննության գնահատականների նվազման կարգով, մրցույթի յուրաքանչյուր ենթածրագրի համար, ըստ գիտության բնագավառների (մասնագիտությունների) Կոմիտեն ձևավորում է վարկանիշային ցանկեր ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

9.2 Խորհուրդը, ձևավորված վարկանիշային ցանկերի հիման վրա, Հայտերի վերջնական ընտրության համար ներկայացնում է Հայտերի ֆինանսավորման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

9.3 Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, ելնելով Խորհրդի եզրակացությունից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան ծախսային ուղղությամբ նախատեսված ֆինանսական հատկացումների

չափից, հաստատում է ֆինանսավորման երաշխավորվող Թեմաների ցանկը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

9.4 Մրցույթի արդյունքները հրապարակվում են Կոմիտեի համացանցային պաշտոնական կայքում:

9.5 Կոմիտեն Կազմակերպությանը տրամադրում է տվյալ Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը, Հայտատուների գիտական ղեկավարների ցուցակը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10 Հաշվետվություն

10.1 Թեմայի իրականացման մասին կազմվում են ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ:

10.2 Թեմայի իրականացման ընթացքում, առաջին և երկրորդ ենթածրագրերի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո (12 ամիսը լրանալուց հետո) Հայտատուն Կոմիտե է ներկայացնում ընթացիկ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

10.3 Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ հաշվետվությունն ընդունելու մասին:

10.4 Սույն հրավերի **1.7** ենթակետով պահանջվող գիտական հրապարակումները պետք է առնչվեն Թեմային: Գիտական հոդված չեն համարվում գիտաժողովների նյութերի ժողովածուներում տպագրված նյութերը:

10.5 Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

▪ *This work was supported by the Science Committee of RA (Research project № _____).*

Ուշադրություն. **Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվի Թեմայի իրականացման արդյունք, հետևաբար՝ չի ընդունվի հաշվետվության մեջ:**

10.6 Թեմայի իրականացման ընթացքում կատարողը և նրա գիտական ղեկավարը պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ընթացիկ կամ ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացությունը տալիս:

11 Այլ պայմաններ

11.1 Կոմիտեն կարող է դադարեցնել Թեմայի առաջին և երկրորդ ենթածրագրերի յուրաքանչյուր փուլի հետագա 12-ամսյա ֆինանսավորումը, եթե՝

- չեն բավարարվել հաջորդ փուլի նվազագույն պայմանները կամ ընթացիկ հաշվետվությանը կից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթերը,

- սահմանված ժամկետում չի ներկայացվել ընթացիկ հաշվետվություն կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,

- հաշվետվությամբ ներկայացվել է Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն:

11.2 Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և հաշվետվությունները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

11.3 Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից (հեռախոս՝ +37410 210 140 (*113; *116), էլեկտրոնային փոստ՝ support@scs.am):

Հավելված N 2.1

«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների

աջակցության ծրագիր - 2023» մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

Հավելված N 2.2
«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթի հրավերի

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ից
(ազգանուն)
_____
(բնակության հասցե)
_____
(բջջային հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթին մասնակցելու «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2023 թ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 11 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***համառոտ բնութագիրը (անոտացիա)***

2. ***խնդրի դրվածքը, արդի վիճակը***

3. ***նախագծի նպատակները և խնդիրները***

4. ***հետազոտական ծրագիրը***

5. ***իրականացման եղանակները***

6. ***առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

7. ***օրացուցային պլան (ըստ եռամսյակների կամ Գանտի աղյուսակ)***

8. ***միջազգային համագործակցության նախադրյալները և նպատակահարմարությունը***

9. ***փվյալ ուղղությամբ ունեցած ձեռքբերումները***

10. ***ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները*** (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

11. ***օգտագործված գրականության ցանկը***